ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի ապրիլի 15-ից մինչև 2026 թվականի մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Մարինա Մանուկյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1264-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը շարունակվում է լրամշակվել՝ հաշվի առնելով համընդհանուր թվայնացման գործընթացը: Նախատեսվում է իրականացնել մշտադիտարկում անձնական օգնականի ծառայության որակի և քանակական ցուցանիշերի վերաբերյալ., որոնց արդյունքները հաջորդիվ հիմք կհանդիսանան նախագծի մշակման մեջ:

2. Նախաձեռնվել է «ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների տրամադրման թվայնացման գործընթացի մեկնարկը և ցանկի ընդլայնման անհրաժեշտությունը: Նախագծի արդյունավետ մշակման նպատակով իրականացնում եմ վերլուծություն նախորդ տարիներին տրամադրված աջակցող միջոցների թվային ցուցանիշերի վերաբերյալ: Վերլուծությունն դեռևս ընթացքի մեջ է:

3. Հայաստանում գործում է համայնքային 5 փոքր տուն տարբեր մարզերում: Ապաինստիտուցիոնալացման համատեքստում ի թիվս այդ տների, կառուցվում և վերանորոգվում են համայնքային փոքր խմբային տներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց մշտական բնակության նպատակով: Մասնավորապես, անմիջական մասնակցություն ունեմ ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ, Ակնաշեն, Մրգաստան

համայնքներում ստեղծվող փոքր տների վերակառուցման և գործունեության կազմակերպման աշխատանքներին: Ակնաշենի համայնքային փոքր խմբային տունն արդեն իսկ հանձնվել է շահագործման մայիս ամսին, որոեղ ապրելու են 12 հաշմանդամություն ունեցող անձ: Մրգաստանի նախագիծը գտնվում է լրամշակումների փուլում:

4. Մասնակցում եմ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Հավասարության և մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար» ծրագրի շրջանակում կազմակերպվող տեխնիկական աջակցության առցանց հանդիպումներին որպես ՀՀ ԱՍՀ նախարարության ներկայացուցիչ և եվրոպացի գործընկերներին ներկայացրել եմ հաշմանդամության ոլորտին առնչվող ՀՀ քաղաքականությունն ու օրենսդրությունը:

5. Պատասխանել եմ քաղաքացիների դիմում-բողոքներին: Ներկայացված դիմում-բողոքները մանրամասն ուսումնասիրվել են, տրամադրվել են համապատասխան պարզաբանումներ և ուղղորդումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արտոնությունների, անձնական օգնականի ծառայության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

6. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետի հանձնարարությամբ ուղարկել եմ տարաբնույթ գրություններ տարբեր գերատեսչություններին, մարմիններին, տեղային և միջազգային կազմակերպություններին:

Փորձագետ՝ Մարինա Մանուկյան

02.07.2026թ.

Աշխատանքն ընդունեցի:
Լ. Թումանյան